

ՀԱՐՑԱՇԱՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

1. Գործառույթը ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ (այսուհետ՝ ՏԻՄ) համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած լիազորություն՝ համայնքի տարածքում կազմակերպելով սոցիալական օգնության ծառայության գործունեությունը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդված՝ պատվիրակած լիազորության մասով):
- 1) Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝
- ա. «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ.
բ. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5-րդ և 13-րդ կետեր.
/Լրացվել է՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 7-րդ կետ/
գ. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1864-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի Ձև N 1.
դ. ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 20-ի N 255-Ն որոշմամբ հաստատված հավելվածի Ձև N 1.
ե. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 723-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետ.
զ. ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված N1 հավելվածի 5-րդ և 13-րդ կետեր, համաձայն որոնց՝ ընտանիքի կազմը և փաստացի բնակության վայրը որոշվում են գործակալության, տեղական ինքնակառավարման մարմնի և սոցիալական աջակցության խորհրդի մեկական ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելությամբ, եթե՝	<p>Վահագնիի գյուղապետարանի աշխատակազմը սերտ փոխհամագործակցության մեջ է Վանաձորի սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի /ՄԾՏԲ/ հետ: Աշխատանքները կազմակերպվել են սահմանված կարգին համապատասխան:</p> <p>1) Վանաձորի ՄԾՏԲ-ի մասնագետներից և Սոցիալական աջակցության խորհրդի /ՍԱԽ/ անդամներից կազմված հանձնախմբի միջոցով իրականացվել են տնային այցելություններ՝ անապահովության գնահատման համակարգում /ԱԳՀ-ում/ հաշվառված Վահագնի համայնքի անապահով ընտանիքների սոցիալական վիճակի, ընտանիքի կազմի և այլ պայմանների ուսումնասիրության նպատակով: Կատարված տունայցերի արդյունքում ընտանիքների հաշվառման գործերում համապատասխան անձանց դիմաց ամրագրվել են «բացակա» կամ «հարգելի բացակա» գրառումները: Ստորև ներկայացվում են ընտրանքային օրինակներ՝</p>					

<p>1) Որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկանքում որպես դիմողի ընտանիքի բնակության վայր նշված է երկրաշարժի հետևանքով քանդված շինության գտնվելու վայրը:</p> <p>2) դիմողը ներառված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրում՝ ոչ իր փաստացի բնակության վայրով:</p> <p>3) Ուսումնասիրության արձանագրությունն ստորագրվում է տնային այցելությանը մասնակից բոլոր պաշտոնատար անձանց կողմից:</p> <p>4) Ընտանիքի բնակարանային պայմանները՝ այլ պայմաններ (վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, առողջարան, հիվանդանոց, զբոսաշրջության հանգրվան, մանկապարտեզ, դպրոց, նկուղ, ավտոտնակ և այլն):</p> <p>Պահանջվող փաստաթուղթը՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից կամ հյուրանոցի, առողջարանի, հիվանդանոցի, զբոսաշրջության հանգրվանի, մանկապարտեզի, դպրոցի կառավարման ղեկավար մարմնից:</p>	<ul style="list-style-type: none"> • ՍԱ 665934 Սամվել Բուլղադարյանի համար ամրագրվել է «Հարգելի բացակա» /գտնվում է 27.12.2013թ.-ից զինվորական ծառայության մեջ սկսած 20.12.2013թ.-ից /հիմք՝ Վանաձորի զինկոմիսարիատի կողմից տրված տեղեկանքը/: <p>1) Համայնքի 20 ընտանիքների համար կառուցվել են տներ: Ընտրանքային օրինակ՝ Կիրակոսյան Վալերի /ՍԱ 87714/. Վահագնիի գյուղապետարանի կողմից 28.10.2014թ. տրված տեղեկանքի համաձայն երկրաշարժի հետևանքով կորցրել է տունը, այժմ բնակվում է տնակում:</p> <p>2) Դեռևս 11 ընտանիքներ բնակապահովման խնդիր ունեն:</p> <p>3) Համատեղ կատարված տնային այցելությունների արձանագրությունները ստորագրել են ՍԱԽ-ի անդամները և ՍԾՏԲ-ի մասնագետը:</p> <ul style="list-style-type: none"> • ՍԱ 756862 Գրիշա Աբրահամյան.ամրագրվել է «Հարգելի բացակա» /07.08.2013թ. գտնվում է ՌԴ-ի Միխայլովի անվան հրետանային ակադեմիայում/, /հիմք՝ Վանաձորի զինկոմիսարիատի կողմից տրված տեղեկանքը/: • ՍԱ 838362 Նվեր Սարգսյանի համար ամրագրվել է «Հարգելի բացակա» /գտնվում է 22.07.2013թ.-ից զինվորական ծառայության /հիմք՝ Վանաձորի զինկոմիսարիատի կողմից տրված տեղեկանքը/ <p>Չկան նման ընտանիքներ</p>						
<p>2. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1864-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի Ձև N 1.</p> <p>Ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝</p> <p>1) տեղեկանք բնակարանային պայմանների մասին (աղետի հետևանքով տրամադրված տնակ, ոչ</p>	<p>1) Նման տեղեկանքի օրինակ բերված է սույն արձանագրության 1.1 կետում /Կիրակոսյան Վալերիի ընտանիքի</p>						

<p>հիմնական շինությունն)՝ տրված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից.</p> <p>2) 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային բնակարանի համար Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորած մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիմքով տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանք.</p> <p>3) տեղեկանք՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառելու մասին՝ տրված խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:</p>	<p>համար/:</p> <p>2) «Հայաստանի սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանում գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲԸ-ի Վանսեյսմշինի կողմից 14.02.2013թ. տրված տեղեկանքի հիման վրա Սոս Բուլղաղարյանի /ՍԱ 87483/ ընտանիքին տրվել է 3-րդ կարգի վթարայնության տեղեկանք:</p> <p>3) Նման երեխաներ չեն հաշվառվել:</p>					
<p>3. ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 20-ի N 255-Ն որոշմամբ հաստատված հավելվածի Ձև N 1. դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի 6-րդ կետ՝ տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից կամ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնից զոհված՝ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի մյուս անդամների մասին:</p>	<p>Չկան նման ընտանիքներ</p>					
<p>4. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 723-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետ. Սոցիալական աջակցության Խորհուրդը կազմում է հանձնաժողով՝ առնվազն երեք անդամով, որում կարող են ներգրավվել ՀՀ մարզպետարանի աշխատակազմի, խորհրդի անդամ կազմակերպությունների, դիմողի փաստացի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներ:</p>	<p>Հարակից բազաներից ստացված տեղեկատվության համադրման արդյունքում Վահագնի համայնքից նման ընտանիքներ ավել վճարված նպաստի գումարների ետ գանձման խնդիր չեն ունեցել:</p>					
<p>5. ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերություն. տեղեկանք խնամակալության և հոգաբարձության մարմնից՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառվելու մասին</p>	<p>Նման երեխաներ չական:</p>					

2. Գործառույթը ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ համայնքի ղեկավարը ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար (33.1-րդ հոդվածի 2-րդ կետ), համայնքի ղեկավարը սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ ((33.1-րդ հոդվածի 21-րդ կետ), համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ (43-րդ հոդվածի 2-րդ կետ):

Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝

- 1) «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 21-րդ հոդվածներ.
- 2) ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6.2-րդ կետի 2-րդ ենթակետ:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահ պանված չէ	Հայտ նաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
<p>1.«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.</p> <p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.</p>	<p>Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից զբաղվածության ծրագրերում Վահագնի համայնքից քաղաքացիներ չեն ընդգրկվել:</p>					

<p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p>	<p>Հասարակական վայրերի մատչելիության ուղղությամբ կատարված վերլուծությունը ունի հետևյալ պատկերը.</p> <p>Համայնքի գրասենյակի տարածք մտնելու համար փողոցի հատվածից առկա են 6-7 աստիճաններ, որը անմատչելի է դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց համար Վահագնիի գյուղապետարանի մուտք:</p> <p>Նույնատիպ խնդիր է առկա Վահագնիի դպրոցի մուտքի մոտ: Անվասայլակով երեխաներ դպրոցում չկան:</p> <p>Առողջության կենտրոնի մուտքը կարելի է համարել մասամբ մատչելի: Անհրաժեշտության դեպքում տնային այցելության լուծվում են առողջության պահպանման հարցերը:</p>					
<p>3. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6.2-րդ կետի 2-րդ ենթակետ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը՝ տվյալ անձի նկատմամբ խնամակալություն (պատրոնաժ) սահմանելու մասին:</p>	<p>Նման որոշում չի կայացվել:</p>					